ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ «ԱՐՄԱՆ-ԵՐԵՄ» ՍՊԸ
РА ГЕГАРКУНИКСКАЯ ОБЛАСТЬ ООО "АРМАН-ЕРЕМ"
RA MARZ GEGHARKUNIK LLC "ARMAN-EREM"

ք.Գավառ, Գ. Միքաելյան 19 հեռ. (093) 19-66-68 էլ. փոստ.armanerem@mail.ru
г.Гавар. Г. Микаелян 19 тел. (093) 19-66-68
c.Gavar. G. Mikaelyan 19, tel. (093) 19-66-68

№ 03/26-43 «20» ապրիլի 2026թ.

«Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝
պարոն Ա. Հովհաննիսյանին

«Արման-Երեմ» ՍՊԸ-ն (ՀՀ քաղաքաշինության Կոմիտեի կողմից տրված լիցենզիա ՔՊԼ-000783-09) դիտարկելով ՀՀ ԿԳՄՍՆ «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի ՀՀ Սյունիքի մարզի «Զորաց քարեր» բնակատեղի» պատմամշակութային արգելոցի մոդուլային կառույցի հարակից տարածքի բարեկարգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը երաշխավորում է համապատասխանությունը ՀՀ օրենսդրությամբ և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին:

Օբյեկտի շինարարության նախահաշվային արժեքը կազմում է 19903,048 հազար դրամ, ներառյալ ԱԱՀ:

Առդիր 2 թերթ:

Տնօրեն՝ Յու. Ավետիսյան

«ԱՐՄԱՆ-ԵՐԵՄ» «АРМАН-ЕРЕМ» «ARMAN-EREM» 08414485

«Արման-Երեմ» ՍՊԸ

Հաստատում եմ՝
«20» ապրիլի 2026թ.

Տնօրեն՝
______________Յու. Ավետիսյան

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ № 03/26-43

Ըստ ՀՀ ԿԳՄՍՆ «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի ՀՀ Սյունիքի մարզի «Զորաց քարեր» բնակատեղի» պատմամշակութային արգելոցի մոդուլային կառույցի հարակից տարածքի բարեկարգման նախագծանախահաշվային փաստաթղթերի.

Պատվիրատու՝ ՀՀ ԿԳՄՍՆ «Պատմամշակութսյին արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ

Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազման համար հիմք է ծառայել ՀՀ ԿԳՄՍՆ «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի տեխնիկական առաջադրանքը և չափագրման արդյունքները:

Փործաքննության է ներկայացված՝

- ❖ Նախագիծ.
- ❖ Նախահաշիվ.

Նախագծանախահաշվային փաստաթղթերով նախատեսված է ՀՀ Սյունիքի մարզի «Զորաց քարեր» բնակատեղի» պատմամշակութային արգելոցի մոդուլային կառույցի հարակից տարածքի բարեկարգման աշխատանքներ:

Սույն նախագծով նախատեսվում է «Զորաց քարեր» պատմամշակութային արգելոցի մոդուլային կառույցի տարածքի բարեկարգում, դեպի կառույցի մուտքային հանգույց՝ անցուղիների իրականացում, ռելիեֆի առանձնահատկություններից ելնելով՝ հենապատերի կառուցում, դրենաժի միջոցով տարածքից անձրևաջրերի հեռացում, սիզամարգերի իրականացում, առկա ցանցե ցանկապատի փոխարինում մետաղական ճաղաշար ցանկապատով:

Նախագծանախահաշվային փաստաթղթերով մասնավորապես նախատեսված է՝

*Հողային աշխատանքներ*

- ❖ Հողային աշխատանքների իրականացում.
- ❖ Խճի լիցքի իրականացում դրենաժային խողովակների վրա.
- ❖ Սերմի ցանում.

*Հենապատերի կառուցում*

- ❖ Հիմքերի տակ նախապատրաստական շերտի իրականացում B-7.5 դասի բետոնից 10սմ.
- ❖ Բետոնե հենապատերի կառուցում B-12,5 դասի բետոնից.
- ❖ Հենապատերի կառուցում ճեղքած բազալտի երեսապատ մակերևույթով.
- ❖ Բազալտե սրբատաշ գլխադիրի տեղադրում.
- ❖ Խողովակաշարերի տակ ավազային հիմքի կառուցում
- ❖ Դրենաժային պերֆորացված d=200մմ խողովակների տեղադրում.
- ❖ Ջրահեռացման d=90մմ պոլիէթիլենային խողովակների տեղադրում.
- ❖ Հենապատի մետաղական ճաղաշարի իրականացում և ներկում.
- ❖ Հենապատի մեկուսացում գեոտեքստիլով.

*Անցուղիների կառուցում*

- ❖ Գրունտի տոփանում խճով 10սմ հաստության.
- ❖ Նախապատրաստական շերտի իրականացում բազալտե խճով 10սմ հաստության.
- ❖ Սալվածքի իրականացում 4 սմ հաստության բազալտի սալերով.

❖ 80x200սմ եզրաքարի տեղադրում.

Նախագիծը իրականացված է ՀՀ-ում ներկայիս գործող նախագծման, քաղաքաշինական և սանիտարական նորմերին և կանոններին համապատասխան:

Ներկայացված է նախահաշիվ 19903,048 հազ. դրամ գումարով:

Դիտարկելով փորձաքննության ներկայացված նախահաշվային փաստաթղթերը, «Արման-Երեմ» ՍՊԸ-ն նշում է, որ այն կազմված է ՀՀ կառավարության առ 23,06,2011թ N879-Ն որոշումով հաստատված «Գործող գներով շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկման կարգի» համաձայն:

Հաշվարկը կատարված է 1984թ. նորմերով և գներով կազմված տեղային նախահաշվի հիման վրա, կիրառելով աշխատավարձի հաշվարկային ինդեքսը՝ 2763,50 և մեքենաների շահագործման ինդեքսը՝ 3053,76:

Միջին ամսական հաշվարկային աշխատավարձն ընդունված է 299149 դրամ: Նյութերի արժեքն ընդունված է 2026թ. №2 «ինֆորմացիոն տեղեկագրի» տվյալներով: Լիմիտավորված ծախսերը հաշվարկված է ըստ տվյալ պահին գործող նորմատիվների: Համաձայն վերը նշված դրույթի նախահաշվային արժեքները որոշելիս ընդհանուր գների հիման վրա հաշվի են առնված հետևյալ գործակիցները.

Շինարարական նյութերի արժեքին տրված է՝

1. Տրանսպորտային ծախսերը հաշվի առնող գործակից - 1.129
2. Այլ նյութերի չափը հաշվի առնող գործակից - 1.05
3. Պահեստային, փաթեթավորման ծախսերը հաշվի առնող գործակից - 1.02

Դիտարկելով ներկայացված նյութերը «Արման-Երեմ» ՍՊԸ-ն նշում է՝

Նախագծանախահաշվային փաստաթղթերում նկատված թերությունները վերացվել են փորձաքննության ընթացքում աշխատանքային կարգով:

## *Եզրակացություն՝*

ՀՀ ԿԳՄՍՆ «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի ՀՀ Սյունիքի մարզի «Զորաց քարեր» բնակատեղի» պատմամշակութային արգելոցի մոդուլային կառույցի հարակից տարածքի բարեկարգման նախագծանախահաշվային փաստաթղթերը երաշխավորվում է համապատասխանությունը ՀՀ օրենսդրությամբ և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին:

Նախահաշվային արժեքը կազմում է 19903,048 հազ. դրամ, ներառյալ ԱԱՀ:

Փորձագետ՝ Մ. Աղդալյան